ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2024 թվականի N 850-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 269-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը սահմանելու մասին» N 269-Ն որոշման հավելվածի՝

1) 4-րդ կետում «20» թիվը փոխարինել «15» թվով.

2) 8-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) հայտերի ընդունման սկիզբը և վերջնաժամկետը.».

3) 14-րդ կետում «7» թիվը փոխարինել «3» թվով.

4) 54-րդ կետում «տվյալ ուղղությամբ բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտական հանձնաժողովին» բառերը փոխարինել «ԳԹԿ-ին» բառով.

5) 55-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«55.Մանկավարժական աշխատողի դիմումը քննելու նպատակով ԳԹԿ-ի ղեկավարի հրամանով ստեղծվում է 5 հոգուց բաղկացած բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ տվյալ ուղղությամբ բարձրագույն ուսումնական հաստատության 2 մասնագետի պարտադիր ներգրավմամբ, որը ձևավորվում է բողոքը մուտ-քագրվելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է նաև նախարարության 1 և ԳԹԿ-ի 2 աշխատակից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ